ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2019/35

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝

Բողոքաբեր՝ Կարեն Սարգսյանի և «Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչ՝ Մ. Պողոսյանի,

Պատվիրատու՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչ՝ Կ. Բաբախանյանի,

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 21.05.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ դադարեցնել հանձնաժողովի 30.04.2019թ.-ի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումը և վերականգնել «Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ի ներկայացված հայտի փաթեթը և տալ գնահատման:

Բողոքներ քննող անձի 21.05.2019թ.-ի որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 27.05.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 27.05.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 20.06.2019թ.-ին:

2. «Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Հայանում եմ Ձեզ, որ մասնակցել եմ 26.04.2019թ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-Վ, ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-Ա, ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-Շ, ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-Կ, ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-Տ, ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-Լ, ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-Գ, ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-Ե ծածկագրերով մրցույթներին: Բոլոր փաթեթները պատրաստվել և բեռնվել են armeps.am կայք նույն սկզբունքով: Սակայն բացումից հետո պարզ դարձավ որ ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-Վ ծածկագրով մրցույթի փաթեթը թերի է բեռնվել իմ կողմից գործիքի միջոցով կցված էլեկտրանային ստորագրված հավելվածները համակարգում չեն արտացոլվել, երևում է միայն իմ առաջարկած գները XML փաստաթղթով: Նշեմ նաև,որ նման խնդիր նկատվել է նաև այլ կազմակերպության մոտ:

armeps համակարգի խափանումներով աշխատելու պատճառով չի բեռնվել իմ կողմից պատրաստված փաթեթը:»:

Ելնելով վերոգրյալից Բողոքներ քննող անձին խնդրել են դադարեցնել հանձնաժողովի 30.04.2019թ.-ի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումը և վերականգնել «Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ի ներկայացված հայտի փաթեթը և տալ գնահատման:

3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 22.05.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ հնարավորություն տալով «Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ի կողմից 21.05.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Ներկայացված դիրքորոշմամբ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կենտրոնացված կարգով իր ենթակայությանը հանձնված «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպության 2019 թվականի կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-Վ» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակներում ի թիվս այլ մասնագիցների գնման հայտ է ներկայացրել նաև ԱՁ Կարեն Սարգսյանը: Armeps համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելուց հետո արձանագրվել է, որ ԱՁ Կարեն Սարգսյանի գնային առաջարկին որևէ ֆայլ (հավելված) կցված չէ: Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերը գնահատող անդամները հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները ԱՁ Կարեն Սարգսյանի գնային առաջարկը գնահատել են անբավարար՝ առանց արձանագրված անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն տալու:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գնահատմամբ «գնանշման հարցում» գնման ընթացակարգի կիրառման դեպքում էլեկտրոնային կրիչի միջոցով գնային առաջարկի ներկայացումը որևէ կերպ նախատեսված չէ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, ԱՁ Կարեն Սարգսյանի գնային առաջարկը ենթակա էր մերժման, գնահատող հանձնաժողովի որոշումն իրավաչափ է և գնահատող հանձնաժողովը իրավազոր չէր չմերժելու վերոնշյալ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը:»:

Կից տրամադրել են «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-Վ» ծածկագրով գնման ընթացակարգին առնչվող անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճենները (ներառյալ բոլոր մասնակիցների կողմից համակարգ ներբեռնված գնման հայտի փաթեթները):

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/35 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կենտրոնացված կարգով իր ենթակայությանը հանձնված «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպության 2019 թվականի կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-Վ» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 30.04.2019թ. կայացած նիստի N 2 արձանագրության համաձայն' Armeps համակարգի (այսուհետ' Համակարգ) միջոցով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելուց հետո արձանագրվել է, որ «Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում հավելվածները բացակայում են՝ ներառյալ Հավելված 5-ը՝ գնային առաջարկը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները, «Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ի գնային առաջարկը գնահատել է անբավարար և մերժել է վերջինիս հայտը:

Բողոքներ քննող անձը ՀՀ ֆինանսների նախարարությանը 04.06.2019թ.-ին ուղղել է հարցում, որում մասնավորապես նշվել է՝ «հայտնել, արդյո՞ք հնարավոր է Մասնակցի կողմից հայտի փաթեթով ներկայացված հավելվածները համակարգում չարտացոլվելու պատճառ հանդիսանալ www.armeps.am համակարգի խափանումներով աշխատելը, թե՞ ոչ: Եթե ոչ, ապա խնդրում եմ հայտնել Մասնակցի կողմից ներկայացված հայտի փաթեթը համակարգում թերի բեռնվելու պատճառների մասին տեղեկատվություն:»:

Ի պատասխան վերոնշյալ հարցմանը, ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է հետևյալը՝ ««Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ի բարձրացրած խնդրի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը:

Վերջինս տեղեկացրել է, որ գրության մեջ նշված ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթը առկա է համակարգում և տեսանելի armeps.am կայքի «Հայտեր» բաժնում, սակայն այն թերի է, պայմանավորված հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու հանգամանքով:

Ինչ վերաբերում է հայտի փաթեթի պատրաստման պահին համակարգի խափանումներով աշխատելուն, ապա հայտնում ենք, որ armeps համակարգը աշխատել է անխափան, որի միջոցով գրությամբ նշված ընթացակարգի հայտարարության և հրավերի հրապարակման օրվանից՝ 19/04/2019թ. մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը՝ 26/04/2019թ. համակարգում իրականացվել է 1005 հայտի փաթեթի ներբեռնում՝ թվով 250 ընթացակարգերի համար, իսկ գրությամբ նշված ընթացակարգի համար ներբեռնվել է 8 հայտ, որոնք հասանելի են armeps.am կայքի «Հայտեր» բաժնում:»:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ի կողմից 21.05.2019թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ … հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին

համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերը գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կենտրոնացված կարգով իր ենթակայությանը հանձնված «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպության 2019 թվականի կարիքների համար

հանդերձանքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-Վ» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ի կողմից չի ներկայացվել Հավելված 5-ը՝ գնային առաջարկը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ի կողմից պետք է հայտով ներկայացված բոլոր փաստաթղթերը՝ հատկապես գնային առաջարկը, հաստատված լիներ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի բացակայության պայմաններում ներկայացված հայտն ենթակա է մերժման՝ առանց շտկման հնարավորության ընձեռնման:

Ուստի, տվյալ պարագայում, գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը մերժելու մասին որոշումն իրավաչափ է և բխում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ի կողմից 21.05.2019թ.-ին ներկայացրած բողոքն ամբողջությամբ մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**